

Գ Ր Ա Ն Ո Ս Ա Կ Ա Ն

Հետազոտողը բավականաչափ ներկայացրել է միջուկային էներգետիկայի պատմությունը՝ ատոմային զենքի, կառավարվող միջուկային ռեակտորի ստեղծման, ինչպես նաև միջուկային էներգետիկայի օգտագործման ժամանակ առաջացած աղետների պատմությունը:

Հետազոտել է նաև ԱԵՄԳ-ի գործունեությունը և ատոմակայանների տարածվածությունը ամբողջ աշխարհում:

Առանձին անդրադարձ է ունեցել Հայկական ԱԵԿ-ի (Մեծամոր) ստեղծման, վերագործարկման և շահագործման մասին: Նաև նշել է Հայաստանում ատոմային էներգետիկայի հնարավոր զարգացման ուղղությունները:

Հետազոտողը «Ատոմային դարաշրջան դադարեցում» ծրագիրը ուսումնասիրելով հանգել է կարծիքի, որը մասնակիորեն է համապատկասխանում իրականությանը:

Ծրագիրը քաղաքական որոշ իրավիճակների հետևանքով էներգետիկ ճգնաժամ է առաջացրել որոշ պետություններում, որը հաջողվեց հաղթահարել, սակայն ծրագիրը հնարավորություն տվեց հասարակությանը իջեցնել միջուկային վտանգի աստիճանը, ինչպես նաև զարկ տվեց կանաչ էներգետիկայի զարգացմանը, նոր էներգետիկ տեխնոլոգիաների ստեղծմանը:


Աշխատանքում նշված չէ 2023 թվականին ԱՄՆ-ի ջերմամիջուկային լաբորատորիայում կատարված կառավարվող ջերմամիջուկային սինթեզի մասին, երբ հնարավոր եղավ առաջին անգամ ստանալ ավելի մեծ էներգիա, քան ծախսվել էր սինթեզի համար: Սա հնարավորություն կտա մոտ ժամանակահատվածում վերջակետ դնել ատոմային էներգետիկայի վտանգավոր դարաշրջանին:

Ընդհանուր առմամբ հետազոտական աշխատանքը կատարվել է գերազանց և հետազոտողը ունի ուրույն կարծիք, ուստի առաջարկում եմ աշխատանքը գնահատել գերազանց:

Գրախոս՝

Երկրաֆիզիկոս

«Հայաստան» ՊՈԱԿ «Գյուլմրիի
անտառտնտեսություն» մասնաճյուղի
փոխտնօրեն՝


Մկրտիչ Ալեքսանյան